



ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՊԱՇՏՊԱՆԵՔ ԶԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



ՎԱՂՎԱ ՄԱՍԻՆ ՀՈԳ ԵՆ ՏԱՆՈՒՄ ԱՅՍՕՐՎԱՆԻՑ

Յուրաքանչյուր տարի աշխարհում գրանցվում էին վարակիչ հիվանդությունների բազմաթիվ դեպքեր: Այսօր արդեն պատվաստումների շնորհիվ այդ հիվանդություններից շատերը համարյա չեն արձանագրվում: Վարակիչ հիվանդությունները հաճախ կարող են հանգեցնել համաճարակների, եթե նրանց դեմ պատվաստումներ չկատարվեն: Վարակիչ հիվանդությունների հարուցիչները մանրէներն ու վիրուսներն են:



Ո՞Ր ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԸ



Հայաստանի Հանրապետությունում երեխաները պատվաստվում են շուրջ 17 հիվանդությունների դեմ: Պատվաստումների ազգային օրացույցով նախատեսվում է պատվաստումներն սկսել 6 շաբաթականից:

ԱՐԴՅՈ՞Ք ԱՆՎՏԱՆԳ ԵՆ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ

Պատվաստանյութերը նախքան շուկա դուրս գալն ենթարկվում են լայնամասշտաբ փորձարկման և հետազոտության: Պատվաստումից առաջացած կողմնակի բարդությունները նախապես մանրակրկիտ հետաքննվում են անկախ մարմինների կողմից: Բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվում երեխաների պատվաստման հետ կապված ռիսկերի գնահատման ոլորտում: Չի հայտնաբերվել որևէ պատճառա-հետևանքային կապ, օրինակ՝ պատվաստման և ուղեղի կաթվածի, Էպիլեպսիայի, դիաբետի, աուտիզմի, մանկական հանկարծամահության միջև:



Ձեր երեխայի առողջության պահպանման համար շատ կարևոր միջոց է պատվաստումը: Երեխաները ՀՀ-ում պատվաստվում են 6 շաբաթականից: Հիվանդություններից պատշաճ պաշտպանության համար անհրաժեշտ է, որ Ձեր երեխան ստանա բոլոր պատվաստումներն ըստ օրացույցի: Պատվաստման արդյունքում կարող են առաջանալ հետպատվաստումային սպասվող երևույթներ: Սովորաբար նրանք ի հայտ են գալիս պատվաստումից հետո առաջին 48 ժամվա ընթացքում:

ՀԵՏՊԱՏՎԱՍՏՈՒՄ ԱՅԻՆ ՌԵԱԿՑԻՎԱՆԵՐԻ Ի ԴԵՊՔՈՒՄ ՏՐՎՈՂ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Երեխային գուրգուրելով և շեղելով նվազում է ցավի զգացումը:

Ջերմության դեպքում երեխային տալ լրացուցիչ հեղուկ, նորածիններին՝ հաճախակի կերակրել կրծքով:

Ներարկման տեղի ցավի դեպքում խուսափել վերջույթին դիպչելուց, շփելուց:

Եթե երեխան շատ անհանգիստ է կամ ունի բարձր ջերմություն, ապա անհրաժեշտ է տալ ջերմիջեցնող:

Եթե ջերմությունը կամ անհանգստությունը երկու օրից չի անցնում, ապա անհրաժեշտ է խորհրդակցել բժշկի հետ: Չի բացառվում պատվաստման օրերին որևէ հիվանդության համընկնումը:

Խուրհուրդ չի տրվում երեխային պատվաստումից առաջ ջերմիջեցնող տալ, քանի որ այդ դեպքում նվազում է պատվաստանյութի արդյունավետությունը:



ՊԱՏՎԱՍՏՈՒՄԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՒՅՑ

| ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒՐ | ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԺԱՄԿԵՏ | | | | | | | | | | | |
|----------------------------|----------------------------|----------------------------|--------|---------|---------|---------|---------|---------|--------|----------------|---------------------------------|------------|
| | Ծնվելուց հետո 0-24 Ժ. ընթ. | Ծնվելուց հետո 0-48 Ժ. ընթ. | 6 շաբ. | 12 շաբ. | 18 շաբ. | 24 շաբ. | 12 ամս. | 18 ամս. | 6 տար. | 13 տ. աղջիկներ | 15-16 տ. (և բոլոր 10 տարին մեկ) | 16-17 տար. |
| ՎՀԲ | | | | | | | | | | | | |
| ԲՑԺ | | | | | | | | | | | | |
| ԱԿԴՓ /ՎՀԲ/ՀԻԲ | | | | | | | | | | | | |
| ՕՊՊ | | | | | | | | | | | | |
| ՌՈՏԱ | | | | | | | | | | | | |
| ՊՆԵՎՄՈ | | | | | | | | | | | | |
| ԻՊՊ | | | | | | | | | | | | |
| ԿԿԽ | | | | | | | | | | | | |
| ԱԿԴՓ (համակցված) | | | | | | | | | | | | |
| ԱԴՓ-Մ | | | | | | | | | | | | |
| ՄՊՊ (2 դեղաչափ) | | | | | | | | | | | | |
| ՄԵՆԻՊԱՎՈԿԱՅԻՆ | | | | | | | | | | | | |
| ՎՀԱ (2 դեղաչափ) | | | | | | | | | | | | |
| ԿԿԽ (2 դեղաչափ չունեցողին) | | | | | | | | | | | | |
| ՏՈՒԼԱՐԵՄԻԱ | | | | | | | | | | | | |

*ՎՀԱ և ՄՊՊ պատվաստումների 1-ին և 2-րդ դեղաչափերի միջև պետք է պահպանել առնվազն 6 ամիս ընդմիջում:

ԴԻՑԵՐԻ

Հարուցիչը մանրէ է: Փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով: Առաջացնում է վերին շնչուղիների՝ հատկապես բկանցքի սուր բորբոքում, որը բերում է **այտուցի և շնչահեղձուքյան**:

ԿԱՊՈՒՅՑ ՀԱՅ

Հարուցիչը մանրէ է: Փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով: Հիվանդությունն ընթանում է վերին շնչուղիների բորբոքումով, այտուցով և **չոր, տանջող հազով**: Հազն աստիճանաբար ուժեղանում է՝ ստանալով նոպայաձև բնույթ: Այն երեխաների շրջանում կարող է մահվան պատճառ դառնալ: Հնարավոր չէ պատվաստումով կապույտ հազն ամբողջովին կանխել, բայց հիվանդության ընթացքը պատվաստված անձանց մոտ ավելի մեղմ է:

ՓԱՏՆՅՈՒՄ

Հարուցիչը մանրէ է: Վարակի հիմնական փոխանցման ուղին կոնտակտայինն է՝ մաշկի վնասվածքի միջոցով, առավել վտանգավոր են խորը վնասվածքները: Հիվանդությունը բնորոշվում է նյարդային համակարգի ախտահարմամբ, որը բերում է տարբեր մկանախմբերի ցնցումների, կարող է հանգեցնել մահվան:

ՊՈԼԻՍԻԵԼԻՏ

Պոլիոմիելիտը բարձր վարակելիության վիրուսային հիվանդություն է, որի հարուցիչն ունի 3 շճատիպ (1-ին, 2-րդ, 3-րդ): Վարակը փոխանցվում է օդակաթիլային (հազալուց, փռշտալուց) և սննդային ճանապարհներով: Ախտահարելով նյարդային համակարգը՝ առաջացնում է կայուն հաշմանդամություն:

ՀԻԲ

Հարուցիչը մանրէ է: Փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով: Հեմոֆիլուսային Բ տիպի վարակը (ՀԻԲ վարակը) երեխայի մոտ կարող է առաջացնել գլխուղեղի, ուղեղի թաղանթի սուր բորբոքում՝ մենինգիտ, թոքաբորբ, միջին ականջի բորբոքում: ՀԻԲ վարակը հատկապես վտանգավոր է մինչև 5 տարեկան երեխաների համար: Հիվանդ երեխաների 5-ից 1-ի մոտ զարգանում է գլխուղեղի ախտահարում կամ լսողության կորուստ:

| | |
|-------------------------------|---|
| Հեղուցի Բ | Հեպատիտ Բ-ի վիրուսը փոխանցվում է տարբեր բժշկական միջամտությունների ժամանակ, արյան, կենսաբանական հեղուկների միջոցով, մորից ծննդաբերության ժամանակ: Սա է պատճառը, որ երեխաները Հեպատիտ Բ-ի դեմ պատվաստումը ստանում են հենց ծննդատանը: |
| Պահպանված Վարկ | Հիվանդության հարուցիչը մանրէ է, որն առաջացնում է ականջաբորբեր, քիթըմպանի վարակներ, թոքաբորբ և մենինգիտ: Մանրէները կարող են ներթափանցել ուղեղ- ողնուղեղ և լրջորեն վնասել դրանք: Պնևմոկոկային վարակների դեմ ամենաարդյունավետ և տնտեսապես շահավետ կանխարգելիչ միջոցը պատվաստումներն են, ինչի մասին է վկայում աշխարհի փորձը: |
| Էդիտիվ Պրոտեզ (ԽՈՉՈՒԿ) | Հարուցիչը վիրուս է: Փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով: Հիմնականում ախտահարում է գեղձային հյուսվածքը, առաջին հերթին՝ հարականջային թքագեղձերը: Ամենավտանգավոր բարդություններից են ուղեղի թաղանթի և գլխուղեղի բորբոքումը: Որպես բարդություն կարող է զարգանալ նաև ենթաստամոքսային գեղձի բորբոքում, տղաների մոտ՝ ամորձիների, աղջիկների մոտ ձվարանների բորբոքում, որոնք հետագայում կարող են պատճառ դառնալ անպտղության: Հիվանդությունից հուսալի պաշտպանություն է ապահովում օրացուցային ժամկետներում կատարված պատվաստումը՝ ԿԿԽ պատվաստանյութով: Մեկ ներարկումով երեխան պաշտպանվում է երեք հիվանդությունից: |
| Կարսուր | Հարուցիչը վիրուս է: Փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով: Հիվանդության նշաններն են՝ արտահայտված ցանը, կոնյուկտիվիտը, բարձր ջերմությունը: Հիմնական բարդությունը թոքաբորբ, էնցեֆալիտ: Կարմրուկն արձանագրվում է տարբեր երկրներում և չպատվաստված անձը կարող է վարակվել ճանապարհորդության ընթացքում և ՀՀ-ում բերովի դեպքի արձանագրման պատճառ հանդիսանալ: Կարմրուկի կանխարգելման միակ անվտանգ և արդյունավետ միջոցը պատվաստումն է: |
| Կարսուխ | Հարուցիչը վիրուս է: Փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով: Հիվանդությունը խիստ վտանգավոր է, հատկապես հղիների համար: Այն կարող է առաջացնել վիժում, նաև պտղի մոտ լուրջ բնածին արատներ՝ սրտի բնածին արատներ, կուրություն, խլություն: |

| | |
|----------------------------|---|
| Ռոտավիրուսային Վարկ | Հարուցիչը վիրուս է: Ռոտավիրուսների փոխանցումը մարդուց մարդուն տեղի է ունենում բերանա-կղանքային ճանապարհով: Ռոտավիրուսները կարող են առաջացնել ծանր ջրային լուծ, որը հաճախ ուղեկցվում է փսխումով, ջերմությամբ և որովայնի շրջանում ցավերով: Երեխաների շրջանում վարակը կարող է առաջացնել ծանր ջրազրկում և հոսպիտալացման պատճառ դառնալ: Փոխանցմանը նպաստում են շրջակա միջավայրի աղտոտված մակերեսները, երեխաների խաղալիքները: Ռոտավիրուսային վարակի գաղտնի շրջանը շատ կարճ է տևում: Հիվանդությունն ամենածանրն ընթանում է մինչև 3 ամսական երեխաների մոտ: |
| Ի Հեղուցի Ը | Հարուցիչը վիրուս է: Հիվանդությունն ընթանում է լյարդի ախտահարմամբ: Վարակը փոխանցվում է շփման, ինչպես նաև ախտահարված սննդի և ջրի միջոցով: Հեպատիտ Ա-ի դեմ պատվաստումն արդյունավետ միջոց է վարակի կանխարգելման համար: |
| Գրիպ | Գրիպը շնչուղիների վիրուսային հիվանդություն է, որն ախտահարում է քթի, կոկորդի լորձաթաղանթները և թոքերը: Գրիպը կարող է վտանգավոր լինել ցանկացած տարիքում: Գրիպի ախտանշանները ներառում են՝ հազ, ջերմություն, գլխացավ, մկանային ցավեր, փսխում, դիարեա: Մեզոնային գրիպի դեմ պատվաստումները հիվանդության կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ և անվտանգ միջոց են համարվում: |
| Տուբերկուլոզ | Հիվանդության հարուցիչը մանրէ է: Տուբերկուլոզ հիվանդությունը մարդուց մարդուն փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով: Հիվանդի հագալու, փռշտալու կամ խորխի միջոցով միկրոբը արտազատվում է արտաքին միջավայր: Առավել հաճախ ախտահարվում են շնչական օրգանները՝ թոքերը, սակայն ախտաբանական պրոցեսի մեջ ընդգրկվում են նաև այլ օրգան համակարգեր: Վաղ մանկական տարիքում չպատվաստվածների մոտ այն հիմնականում առաջացնում է տուբերկուլոզի ծանր ձևեր, որոնք ախտահարում են բոլոր օրգան համակարգերը: |

| | |
|---|---|
| <p>ՄԵՆԻՆՔԱԿՈՎԱԿՅՈՒՄ</p> | <p>Մենինգակոկային վարակը սուր վարակիչ հիվանդություն է, որը հարուցվում է մենինգակոկերի կողմից, փոխանցվում է օդակաթիլային ուղիով և ընթանում է տարբեր կլինիկական ձևերով՝ նազոֆարինգիտ, մենինգիտ, մենինգակոկցեմիա, որը կարող է հանգեցնել կայուն հաշմանդամության և մահվան:</p> |
| <p>ՏՈՒՆԱՐԵՄԻԱ</p> | <p>Տուլարեմիան կենդանիների և մարդու բնական օջախային սուր վարակիչ հիվանդություն է: Ընթանում է ջերմությամբ, ավշային հանգույցների ախտահարմամբ, ընդհանուր ինտոքսիկացիայի երևույթներով: Հայաստանում ապրող կրծողներից տուլարեմիայի վարակի աղբյուր են սովորական դաշտամկները, ջրային առետուները, անտառային և տնային մկները, նապաստակը, որոնց մոտ այս հիվանդությունն ընթանում է սուր, սեպտիցեմիայի երևույթներով և գրեթե միշտ վերը նշված կրծողները այս հիվանդությունից սատկում են: Տուլարեմիայով հիվանդ մարդը վարակի աղբյուր չէ:</p> |
| <p>ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆ</p> | <p>Կատաղությունը կենդանիների և մարդկանց սուր վարակիչ հիվանդություն է, արտահայտվում է հիմնականում կենտրոնական նյարդային համակարգի ախտահարմամբ, ուղեկցվում է շնչառական ու կլման մկանների ջղաձգումներով, անդամալուծությամբ և վերջանում մահով:</p> |
| <p>ՄԱՐԴՈՒ ՊԱՊԻՆՍՄԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԱԿ</p> | <p>Մարդու պապիլոմավիրուսային վարակն առաջացնում է սեռական գորտնուկներ, արգանդի պարանոցի քաղցկեղ: Օրգանիզմը բնական ճանապարհով պայքարում է վարակի դեմ, սակայն մի շարք դեպքերում այն կարող է առաջացնել լուրջ առողջական խնդիրներ՝ սեռական գորտնուկներ, արգանդի պարանոցի քաղցկեղ: Հիվանդության ախտանշաններն սկսվում են շատ ուշ, վարակվելուց տասնյակ տարի հետո, երբ արդեն շատ դեպքերում բուժումն անհնար է: Մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստումներն իրականացվում են սրածայր կանգիլոմաների (գորտնուկների), արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման նպատակով: Վերոհիշյալ բոլոր պատվաստումներն իրականացվում են համաձայն Պատվաստումների ազգային օրացույցի:</p> |

armvaccine.am

NCDC, Armenia
Հիվանդությունների վերահսկման և
կանխարգելման Ազգային կենտրոն